ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2014 թվականի N 299-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին հասցեագրված ֆինանսական աջակցության դիմումներն ուսումնասիրելու և համապատասխան առաջարկություն ներկայացնելու նպատակով՝ **որոշում եմ.**

1. Ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

1) ***Մարզպետ Գարեգինյան*** - հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար,

2) ***Էլզա Հովհաննիսյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ,

3) ***Գարիկ Սարոյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ,

4) ***Մանվել Պետրոսյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ,

5) ***Վանիկ Հունանյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ,

6) ***Նարինե Խչոյան*** - հանձնաժողովի քարտուղար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ:

2. Հանձնաժողովին՝

1) մշակել և հաստատել հանձնաժողովի աշխատակարգը, ինչպես նաև ֆինանսական աջակցության տրամադրման ընդհանուր սկզբունքները:

2) մուտքագրված դիմումները քննարկել և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին առաջարկություն ներկայացնել 15-օրյա պարբերականությամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի հուլիսի 11
ք. Հրազդան